


5870

ԱՆԱՆԻՎ ՇԵՐԱԿԱՑՔ

ՏԻԵԶԵՐԱԳԻՏՈՒԹԻՒՆ  
ԵՎ  
ՏՈՄԱՐ



1-81

12

3



008

ИНСТИТУТ ПО ИЗУЧЕНИЮ РУКОПИСЕЙ ПРИ СНК АРМ. ССР

ТЕКСТЫ ДРЕВНИХ РУКОПИСЕЙ № 2

25 DEC 2008

ՀԱՅԿ. ՍՍԻ ԺՈՂԿՈՒՄՈՎԵԼԻՆ ԿԻ ՁԵՐԱԳՐԵՐԻ ԹԱՄՈՒՄՆԱՄԻՐԻՔԱՆ ԻՆՍԻՏՈՒ

ՀԲՆ ՁԵՐԱԳՐԵՐԻ ՏԵՇԵՐ. № 2

АНАНИЯ ШИРАКАЦИ

КОСМОГРАФИЯ И ТЕОРИЯ  
КАЛЕНДАРЯ

Текст составил канд. историч. наук АШ. АБРАМЯН

Редактор—проф. Г. АЧАРЯН

ՏԻԵԶԵՐԱԳԻՏՈՒԹԻՒՆ  
ԵՎ  
ՏՈՄԸՐ

Աժխատուրյամբ պատմ. գիտուր. թեկնածու Ա.Շ. ԱԲՐԱՄՅԱՆԻ  
Խմբագիր՝ պրոֆեսոր Հ. ԱՃԱՌՅԱՆ

ՀԱՅԳԵՏՀԱՐԱՑ

1940

ՅԵՐԵՎԱՆ

ԱՐՄԳԻՀ

1940

ԵՐԵՎԱՆ

## Ա.ՌԱՋԱՎԱՐԱՆ

1. Անանիս Շիրակացու մեղ հասած ու բանասիրության մէջ հայտնի աշխատություններից մէծ արժեք ե ներկայացնում նրա տիեզերագիտությունը։ Այդ աեքստը հրատարակվել է պրոֆ. Ք. Պատկանյանի կողմից Գետերբուրգում, 1877 թ., նրա կազմած «Անանիայի Շիրակունւոյ մնացորդք բանից» ժողովածույթի մէջ՝ «Յաղագս Երկնի» վերնագրով։

Պրոֆ. Ք. Պատկանյանի այս հրատարակության հիմքը վենետիկյան Միհիթարյանների մատենադարանի մի ձեռագիրն է հանդիսացել։ Տեքստը ձեռագրից արտադրել ու նրան և ուղարկել է Դ. Ղ. Ալիշանը։

Պրոֆ. Ք. Պատկանյանի հրատարակած այդ տեքստն ունի հետեւյալ գըլուխները՝ 1) «Յաղագս Երկնի», 2) «Յաղագս Երկրի», 3) «Յաղագս ծովու», 4) «Յաղագս Երկնային զարդուց», 5) «Յաղագս որ ի մէջ Երկնի և Երկրի շարժմունք», 6) «Յաղագս կաթին ծրոյ», 7) «Յաղագս հիմքային աստեղաց», 8) «Յաղագս լուսնի» և 9) «Յաղագս արեգակն»։ Սրանցից բացի, պրոֆ. Ք. Պատկանյանի հրատարակած Շիրակացու տիեզերագիտության տեքստի վերջում, տասերորդ գլուխ տակ, տեղափորված ե նաև Շիրակացու աստղաբաշխական աշխատության մի գլուխն՝ «Յաղագս կենդանատեսակաց» վերնագրով։

1937 թվի աշնանից Հայկական ԽՍՀ մատենադարանի ձեռագրերի անվանական ու թեմատիկ բիբլիոգրաֆիա կազմելիս, յես առանձին ուշադրություն դարձրի տիեզերագիտական բնույթ ունեցող տեքստերի, մասնավորապես, Անանիս Շիրակացու տիեզերագիտության վրա։ Հին հայկական վորոշ մատենագրերի (Կոբունի և «Աշխարհացոյց»-ի) ընդարձակ և համառնություններով մեղ հասնելու փասողը, ինչպես և պրոֆ. Ք. Պատկանյանի հրատարակած Շիրակացու տիեզերագիտության տեքստում նկատվող աղճատումները, բերել ելին ինձ այն համոզման, վոր Շիրակացու տիեզերագիտությունն անդամահատված ձևով ե մեղ հասել և պիտի վոր յեղած լինի տիեզերագիտության ընդարձակ տեքստ։ Ինձ հաջողվեց մէր մատենադարանում հանդիպել Շիրակացու տիեզերագիտության ընդարձակ տեքստին՝ Շիրակացու ամբողջապես դեռ անհայտ տոմարական մի աշխատատիթյան հետ միասին։

Շիրակացու տիեզերագիտության այդ ընդարձակ տեքստը և առմար



4278 - 2008



նութեմս, յորում մթերեալ են տողորք աստուածալին և են ենթակայացեալ  
ամենայն արէստ մակացութեան. և նախաղանալ է թուականութեանն և  
երաժշտականութեանն, որք են ի տարորչ քանակէ տարակացեալք. իսկ երկ-  
րաշափութեանն և աստեղաբաշխությանն, որք են ի շարունակ քանակէ, և  
զկնի այսոցիկ յարամանեալք արհեստք, և մակացութիւնք, մատենագու-  
թիւնք. և գրէ եթէ ամենայն բոլոր վարդումն հռետորական, թէպէտ և մաս-  
նաւոր զիոչտեսական զօրէն զործասէր մեղուի ամբարեաց ի մեղուանոց:  
ոնդը ի բաղմակէպ մատենագրից Քաղցէացոց և յունաց և ամենայն աղջաց  
առ ի ծանօթ լինելոց...» (թիվ 3062 ձեռ., թերթ 247 թ, 248ա):

Երբակացու զիտական բովանդակություն ունեցող մի շարք աշխատաւ-  
թյունները մեծ չափով ոգտագործվել են միջնադարյան մի շարք հայ մատե-  
նագրերի կողմից—Հովհաննես սարկավագի, Վանականի, Հովհաննես Յերզն-  
կացու, Մարտիրոս Ղըմեցու և ուրիշների:

Երբակացու գրած աշխատաւթյուններն ուսումնասիրության նյութ են  
սկսում գառնալ 19 դարի առաջին քառորդից: Երբակացու առանձին աշխա-  
տավորունների վերաբերյալ սկսում են գրվել մոնողագիտաներ, վորոնցից աչ-  
քի յեն ընկնում հատկապես հայագիտության հինգ խոշոր գիտնականների աշ-  
խատությունները—պրոֆ. Ք. Պատկանյանի, Գ. Տ-Մկրտչյանի, ակադ. Հ.  
Որբելու, ակադ. Զ. Մանանդյանի և պրոֆ. Հ. Մարկվարտի:

Յ. Երբակացու տիեզերագիտությունը պարունակող թիվ 2180 ձեռագիրը  
ժողովածու յէ: Նա պարունակում է Հետելյալ նյութերը:—  
2ա Յովի. Որոտնեցոյ «Ի բան՝ որ առէ ի սկզբանէ տէր զերկինս հաստա-  
տեցեր»:

Ակ.՝ «Ի մասնել բանիս նախերգաբար յարդարեսցուք...»:  
Վ. (9 թ) թերթ «... իսկ առաւել երկինչւրոցն ծայրիցն...»:  
10ա Պատմութիւն և վկայաբանութիւն (Լատինական որինակից):  
Ակ.՝ «Ենկատ. Ա. Ս. Սեղեստրոսի խոսուղանողի և պապի...»:  
Վ. (52 թ) «Այսոքիկ պատմութիւնք դրեցան ի լաթինացւոց օրինակաց»:  
53ա Յովի. Որոտնեցոյ «Մեկնութիւն բանին՝ որ առէ մարդարէն ո՞ ստեղծ-  
առանձինն...»:

Ակ.՝ «Ներդործական իմն անխափան բնաւորեալ են միտք...»:  
Վ. (80 ա) «...և յաղագո այսորիկ այսօքան բաւական լիցի»:  
80ա Գրիգորի Տարեացւոյ տեսութիւն ի բանն՝ հոգի տեառն ի վերայ իմ...  
Ակ.՝ «Տեսանողն վեճերմակ տեսութեամբ ի մարտար...»:  
Վ. (103 թ) «... վասն այն առէ ողի տեառն ի վերայ իմ»:

104ա Բարդողիմեոսի համառօտ հաւաքումն ի դիալէքիկայի:  
Ակ.՝ «Եւ զի խոսելոյ եմք ի Դիալէքիկայէն...»:  
Վ. (124 թ) թերթ «... որպէս յայտնի է ի սահմանս այս ոմն մաքր  
ոչ քերթողն...»:

125ա—153թ գատարկ թղթեր:  
154—Յամկ ուստուլապին ա—չկթ գլխովք և ուստուլապա անխորագիր  
(Հմ. մեր մատենագրանի թիվ 645 ձեռագրի և 1650 ձեռագրի հետ):

Ակ.՝ «Կայ ի վերայ նորա արտաքոյ կամ ի ներքոյ...»:

Վ. (227 թ) «... և թէ ոչ նա ողալ է»:

227թ—«Բան պիտանի և գեղեցիկ»:

Ակ.՝ «Առաջին նարք հայն աստղն է...»:

Վ. (234 ա) «... և այս էր զոր գրեցաք և աստուած յաջողէ ի գործն  
նոցա»:

234թ—Կենդանակերպ:

Ակ.՝ «(Ա)ոյն: Ցուլն: Եկառորն...»:

Վ. (235 ա) «... Եկառորն, աղեղնաւորն Գ., տուան»:

235թ—Ժամանակի չափում:

Ակ.՝ «Ճամն և ժամն ունեցող տիւն և ընդ գիշերն Զի մասն...»:

Վ. (235 ա) «... նոյն եղում «... Ղունկն ի գարի է, գարին ական թաւթով մէ է»:

237ա—286 թ Պարզատումաք:

288թ—(Տոմարական հարց ու պատասխան)

Ակ.՝ «Հայոց թվականն որ եղին ի յո՞ր կետն էր...»:

Վ. (302 ա) «... Պաթ: Զէ թէւ մի յաւելի անկաւ ի ներքս այն է  
պատճառն»:

303ա—«Յաղագս նշանաց յարեգական ի լուսնին. յաստեղս և վասն շարժի և  
որոտման. յասորց գրոց ասացնալ երանելոյն Դանիելի»:

Ակ.՝ «Թշրին զրիմ, որ է հոկտեմբեր՝ թէ արեգակն խաւարի ելանէ  
որդի թագաւորի...»:

Վ. (309 թ) «... և պարսիկս յանձրելոյ յապականին»:

309թ—Վասն խաւարման արեգականն և լուսնին ումենին իմաստափի ասաց-  
եալ:

Ակ.՝ «Յունվարի թէ լուսինն խաւարի...»:

Վ. (315) «... հաց և գինի նուազ (լինի)»:

315ա—Տանուտէրք որք ցուցանեն զգնաց տաքոյն:

Ակ.՝ «Յորժամ խոյն լինի՝ գարունն աղնիւ...»:

Վ. (318թ) «... ի մէջ ձմռանն անձրև գայ»:

319ա—Կաղանդացոյց:

Ակ.՝ «Թէ կիրակի հանդիպի կաղանդամուտն...»:

Վ. (319 թ) «... Եւ յունվարի Ա. կաղանդամուտ է հանապազ»:

319թ—Կաղանդացոյց Կիրակի:

Ակ.՝ «Եթէ կաղանդն ի կիրակէ լինի...»:

Վ. (320 թ) «... թէ պարզ լինի, ողութիւն լինի և չոր»:

321ա—Տարամայնութիւն Հայ եկեղեցւոյ ընդդիմ Փռանիաց:

Ակ.՝ «Առաջին գրիսոսոս մի ընութիւն ասեն...»:

Վ. (321 թ) վերջում թվում և այն հոգեւորականների անուններ, վո-  
րոնք կաթոլիկ են դարձել:

322ա—Յակոբ Գրիմեցոյ մեկնութիւն տումաքի:

Ակ.՝ «Հայեցուածս գերերջանիկ բարունապետի...»:

Վ. (415 թ) Յակոբ Ղըմեցու յիշատակարանը:

416բ— Այս են գաւառք նիզ գաւառին որ ասի Ապարանի:

Ակ.՝ «Ի վերայ Քասախ զեառյն ականցն...»:

Վշ.՝ (417 ա) «... միահամուռ ամենայն եղեւ ժդ. ԲԵՐԳ»:

417բ—429բ— Դատարկ թղթեր:

430ա— Յովհաննես սարկաւագի Յաղագս Շ Եկի»:

Ակ.՝ «Համարձակեցան սմանք յանչանից ստութեան պատճառս...»:

Վշ.՝ (468 բ) «... Եւ զու ըստ խրատուս այսմիկ նշանեա'...»:

468բ— Այլ ի [տ]կար և եղենմագրծ Աւիկա սակս ծռազատին:

Ակ.՝ «Ո՞վ Երկայնամիտ բազմաշնորհ...»:

Վշ.՝ (470 բ) «... զատիկ փրկութիւն, զատիկ նորոգման»:

471ա— Հարցումն Եւսերեա ժամանակագրի:

Ակ.՝ «Ընդէր սարին ՑԿ օր է...»:

Վշ.՝ (475 ա) «... զի ի ԺԵ աւրն կատարի Կ որ Մինին ժամք ԺԲ»:

475ա— Յաղագս տումարի թէ յումէ արարեալ:

Ակ.՝ «Զեբբայեցն Եղրաս, որդի Սարինի...»:

Վշ.՝ (476 բ) «... Է անգամ պատահեալ Մինի ծռազատիկ»:

478ա— Անանիայի Շիրակունյ համարողի առ Խոստացեալս:

Ակ.՝ «Չխոստացեալս մեր հատուցուք զրան...»:

Վշ.՝ 532 բ «... սուսս զանդիտացեալ պատմութիւնս»:

532բ— Պատմութիւն յաղագս գիրազ գիտելոյ սալմսուիք:

Ակ.՝ «Բազումք Էն որ Երազոյ Հաւատան...»

Վշ.՝ (533 բ) «... և նա մեկ[ն]է զտեսութիւն Երազոյն Եթէ չար է Եթէ բարի»:

533բ— Անանիայի Շիրակացոյ յաղագս կշոյս և կշոյց և կշոյդաց:

Ակ.՝ «Ճաղանդն Եձիեւ լիտր ե...»:

Վշ.՝ (535 բ) «... քանքարն լինի գահեկան Ա»:

536ա— Յաղագս չափոյ չափուց (Անանիայի Շիրակունյ համարողի):

Ակ.՝ «Չափ առաջնորդ չափոյ...»

Վշ.՝ (537 ա) «և մասմարովին ճաշակ, որով զգինին Հանեն»:

537ա— Անանիայի Շիրակացոյ թիւք որչափութիւն տանց հին և նոր կտակարանաց:

Ակ.՝ «Գիրք Մովսէսի օրէնսդրի...»:

Վշ.՝ (538 ա) «... Տուն այս Էն ԱՓՇՂԱ»:

538ա— Յաղագս շաղկապութեան արեգական և լուսնի:

Ակ.՝ «Իսկ յորժամ կամիս զիտել թէ զիարդ Են ընթացք արեգական...»:

Վշ.՝ (538 բ) «... ասա մասունան Ռժեւ և կամ Ռժեւ և այս է»:

538բ— Իշխանի, քագաւորի և մարզպանի հայոց:

Վերջանում է Հեթում 2-րդուի:

539բ— Կարողիկոս հայոց:— Հասցնում ե մինչև 1291 թվ. Այլ գրիչ շարունակել ե մինչև 1563 թ.:

Զեռագիրը գրված ե յերեք տարբեր գրենցերի կողմից— Վարդանի, Աթանասի և Սահակի: Վերջինի, Սահակ գրքի, հիշատակաբանից յերեսում ե,

Մատենադարանի թիւլ 2180 գրչագրի առաջին յերեսը:

Վոր ձեռագիրը նա գրել է 1644 թ. (Հայկական ՈՂԳ թվով): Գրիչները ձեւագրում թողել են հետեւալ փոքրիկ հիշատակաբանները:—

103թ— «Ով եղբայր, անմեղադիր լերուք սխալանաց և խոշորութեանց յիշեցէք ի մաքրափայլ յաղաւթս ձեր զեղկելիս Վարդան սարկաւագս և գուք յիշեալ լիջեք ի քրիստոս»:

102թ— «Սխալանաց և խոշորութեան գրիս անմեղադիր լերուք ո՞վ եղբայր, զի խիստ յշտապեցա գրելիս»:

317թ— «Թողութիւն արէք սխալանաց գիրս Աթանաս իշլառ սարկաւագիս»:

318թ— «Արդ պաղատիմ կարդա և տես... զայս գիրքս բարով վայելէս»:

320թ— «Թողութիւն արէք սղալանաց գրիս Աթանասի անսղիտան զպրիս»:

415ա— «Արդ պաղատիմ աղերսալի, և թախանձեմ ըղձմամբ սրտի:

Էղանդիպողոգ յայս մատենի, և զվերծանողութ խուն այս բանի:

Անկեղծ մտօք սերտեալ սրտի, յիշման առնէք զէէքս արժանի:

Զփոքրիկ մարմնովը տաղտկալի, բայց ճոխ մեղօք յանցմամբ ի լի:

ԶՊահակ համբակը եղկելի, ծաղը և ծանակ համայն ցեղի:

Նաև եղբարսն իմ նազելի, դոյզն ինչ օգտօղ յայսըմ ծըրի:

ԶԱռաքեալն ըղձալի, և գԳրիգորըն տենչալի:

Այլ և զհամօրէն ջոկս երամի, որ կան ի կիրթ յայս դպրոցի:

Այլ ամք կենացս ապիկարի չորեքտասան մու աւելի\*):

Ի թուականիս հայոցս ազնի ՈՂ եղ և Երկի»\*\*):

Զեռագրի նյութը— թուղթ և: Գրչության վայրը— հայոնի չի: Գրությունը նոտր և: Գրված և միասյուն: Զեռագիրը զարդարություններ չունի: Կազմը — կաշեպատ տախտակ և:

Թիվ 2762 (209) ձեռագիրը գտրձյալ ժողովածու յե: Նա ունի հետեւալ բոլոնդակությունը:—

Եջ 1. «Հովհաննելու վարդապետի արարեալ, որ մականուն սարկաւագ կոչ, Յաղացս Շեկի»:

Մկ.՝ «Համարձակեցան ոմանք յաննշանից ստութեան պատճառ...»:

Վջ.՝ (Եջ 98) «...ը անդամ պատահեալ լինի ծուաղատիկ»:

Եջ 99—100 չգրված:

Եջ 101. Անանիայի Շիրակունոյ համարողի, առ խոստացեալս:—

Մկ.՝ «Զիստացեալոն մեր հատացուք զրան...»:

Վջ.՝ (Եջ 217) «Զոր մերժեալ խոտեցի. սուտս զանդիտացեալ պատճութիւն»:


Եջ 217. Պատմութիւն յաղագս գիրքան գիտելոյ սաղմոսիւմ և մեկնելոյ:

Մկ.՝ «Բազումք են որ երազոց հաւատան...»:

Վջ.՝ (Եջ 219) «... եթէ չար է, եթէ բարի»:

\* ) Անշուշտ ուզում և ասել  $4 \times 10 + 1 = 41$  տարեկան, վորովհետև  
14 + 1 = 15 տարեկան գրիչ չի կարող լինել:

\*\*) Իմաս'  $1090 + 1 + 2 = 1093 + 551 = 1644$  թ.:



Շիրակացու «Առ խոստացեալոն» աշխատութեան թիվ 2762 գրչագրի  
ստուգին Եղը:

եջ 220. Անանիայի Շիրակացոյ յաղագս կշռոյ, և կշռոց, և կշռորդաց:

Սկ.՝ «Յաղագս տաղանդի» գլուխ:

ՎՀ.՝ (եջ 227) «Յաղագս կաղամադէկողի և մասմարութայշ»<sup>9)</sup>:

եջ 228. Անանիայի Շիրակունոյ՝ թիւք որչափութեան տանց իին և առ կտակարանաց:

Սկ.՝ «Ճննդոց տունք ՏՅԷ...»:

ՎՀ.՝ «... տունք այս են ԱՓօՂԱ»:

եջ 250. Յաղագս շաղկապութեան արեգական և լուսնի:

Սկ.՝ «Իսկ յորժամ կամիս գիտել թէ զիա՞րդ են ընթացք աբեգական...»:

ՎՀ.՝ (եջ 231) «... և կամ թժի և այս է»:

եջ 231ա. (Խշխանք, քաջաւորք և մարզպանք):

Սկ.՝ «Յարեղ: Գամեր: Թիւբաս...»:

ՎՀ.՝ (եջ 233) «... Ամրի, Պատույն: Այսքան սոքա»:

եջ 233. Կարողիկոս հայոց մինչև Ռժի քվականը:

Զեռագիրը չունի հիշատակարան: Գրիւը, գրչության ժամանակը և վայրին—անհայտ են: Մոռավոր ժամանակն ըստ գրչության— XVIII դ. և: Նյութը—թուղթ է: Գրված է միասյուն, նոտր գրով:

Մեր մատենագարանի նյութերը թեմատիզացիայի յենթարկելու ընթացքում պարզվեց նաև, վոր բացի Շիրակացու «Առ խոստացեալսն» աշխատության տեքստում, Շիրակացու տիեզերագիտության այլ ձեռագիր որինակներ և կան, վորոնք պատկանում են պրոֆ. Ք. Պատկանյանի հրատարակած տիեզերագիտության, կամ նրանից ավելի համառոտված խմբագրությանը: Այսպիսով, պարզվում է, վոր Շիրակացու «Առ խոստացեալսն» աշխատությունը մեր հասել և յերեք խմբագրությամբ— ընդարձակ, վորն այժմ մենք հրատարակում ենք, միշտն, վորը հրատարակել է պրոֆ. Ք. Պատկանյանը, և համառոտ, վորը ընդորինակված է թիւլ 1979 ձեռագրում: Ուսումնասիրողների գործը հետազում հեշտացնելու համար, մենք անհրաժեշտ ենք համարում բերել այստեղ մեր մատենագարանի ձեռագրերում յեղած Շիրակացու տիեզերագիտության բիբլոգրաֆիան:—

1. Փոքրիկ հատված Շիրակացու տիեզերագիտությունից: Ընդորինակված և Ղուկաս (Դավիթի գործի) գրչի կողմից 971 թ.: Սա մեր մատենագարանի ունիկում ձեռագրերից ե— մեզ հասած թղթե ամենահին ձեռագիրը հայկական աեքսոտով: Զեռագիրը իր բովանդակությամբ պատճապիտական նյութերի ժողովածու յէ: Զեռագրում ընդորինակված ե յեղել Շիրակացու տիեզերագիտությունը, սակայն թերթերի մեծ մասը թափել են: Նյութը տեղափակած է Շիրակացու աշխատությունների շարքում: (ՏԵ՛ս թիւլ 2679 (102 ձեռագիրը):

2. «Անանիայի Յաղագս Երկնի»:— Ընդորինակված և Գրիգոր քէ. կողմից Ցերպնկայում 1342 թվին: Տեղավորված է տաճարական բովանդակություն ունեցող նյութերի շարքում: Նրան նախորդում է «Յաղագս շրջադարյութեան»

\* Այն ե, կաղամադէկովիթ և ամասաբակովիթ:

երկնից թէ որպես իմաստասիրաց թուեցան», իսկ վերջում չարունակվում է Շիրակացու աստղաբաշխությունն ավելի ընդարձակ ծավալով, քան Պատկանյանի հրատարակած տեքստն է: Շիրակացու տիեզերագիտության այս տեքստը չամբնկում ե Պատկանյանի հրատարակած տեքստի հետ: (ՏԵ՛ս թիւլ 1978 (—2042), թերթ 286թ—316թ):

3. «Անանիայի Շիրակացոյ ասացեալ յաղագս արեգական»:— XIV դարի ընդորինակվություն է: Շիրակացու տիեզերագիտության ամենահամառոտված տեքստն է: Գլուխների յետ և առաջությամբ ընդորինակված է: «Յաղագս արեգական», «Յաղագս հիւսիսային աստեղաց, զոր կոչեն բնեոք երկնի»: Զեռագիրը չունի հիշատակարան: (ՏԵ՛ս թիւլ 5619 (930), թերթ 207ա—214թ):

4. «Անանիայի Յաղագս Երկնի»:— Ընդորինակված և XV դ. Ստեփանոսյանի կողմից: Նմանվում է 5619 թվակիր ձեռագրի տեքստին, այն տարբերությամբ, վոր այստեղ զլուխները խառնված են, իսկ այստեղ—վոր: (ՏԵ՛ս թիւլ 1979 (2052), թերթ 429թ—439ա):

5. «Անանիայի վասն Երկնի»:— Շիրակացու տիեզերագիտության չորս դլուխն և միայն — «Յաղագս Երկնի», «Յաղագս Երկնի», «Յաղագս ծովու» և «Յաղագս Երկնային զարդուց»: Զեռագիրը ընդորինակված և 1426 թվ. Մատթեվոս գրչի կողմից: (ՏԵ՛ս թիւլ 2678, թերթ 342—348):

6. «Անանիայի Շիրակացոյ ասացեալ և յաղագս արեգական»:— Ընդորինակված և XV դ. Կարասետ քահանայի կողմից: Շիրակացու տիեզերագիտության ներկա տեքստը համապատասխանում է թիւլ 5619 ձեռագրի նմբին: (ՏԵ՛ս թիւլ 5610):

7. «Անանիայի յաղագս Երկնի»:— Ընդորինակված և XV դ. Գեվորգ գրչի կողմից: Տեքստը համապատասխանում է պրոֆ. Պատկանյանի հրատարակած տիեզերագիտության խմբին: (ՏԵ՛ս թիւլ 1267, թերթ 310ա—327թ):

8. «Անանիայի Շիրակունոյ համարողի առ խոստացեալսն»:— Ընդորինակված և 1644 թ. Վարդան սարկավագիթ ձեռքով (Զեռագրի մանրամասն նկարագրությունը տրված է առջևում— տե՛ս 2180 թվակիր ձեռագրի նկարագրությունը):


9. «Անանիայի Շիրակացոյ ասացեալ վասն արեգական»:— Ընդորինակված և 1687 թ. Մարտիրոս գրչի կողմից, Մերգինում: «Յաղագս արեգական» դլուխն է միայն: (ՏԵ՛ս թիւլ 2191, թերթ 141—143):

10. «Անանիայի յաղագս Երկնի»:— Ընդորինակված և XVII դ. Կարապետ վարդ. կողմից: Բովանդակությամբ նմանվում է պրոֆ. Պատկանյանի հրատարակած տեքստին: (ՏԵ՛ս թիւլ 2041 (—2053), թերթ 324ա—351թ):

11. «Անանիայի յաղագս Երկնի»:— Ընդորինակված XVIII դ. Կարապետ վարդագետի կողմից: Բովանդակությամբ համապատասխանում է պրոֆ. Պատկանյանի հրատարակած խմբին: (ՏԵ՛ս թիւլ 2041, թերթ 324ա—351թ):

12. «Անանիայի Յաղագս Երկնի»:— Ընդորինակված և 1737 թ. Հակոբ վարդ. Շամախեցու կողմից, Եղմիածնում: Նմանվում է Պատկանյանի հրատարագիտ տեքստին: (ՏԵ՛ս թիւլ 464, թերթ 227թ—247թ):

Մեր մատենագրանի ձեռագրերում յեղած Շիրակացու տիեզերագիտության տեքստը կարելի յէ հետևյալ ձեռվ ճյուղագրելու—



Ներկա ճյուղագրությունն, իշարկե, վերջնական չե: Կարող են լինել միջանկյալ ուրիշ ողակներ, վարոնք մեզ հայտնի չեն: Բացի այդ, նույն խմբի այս կամ այն ձեռագրի կախվածությունը միշտ չե՝ վոր վորոշված և անվիճելի փաստերի հիման վրա, ուստի և մենք առանձին խմբի որինակները միացրել ենք կետալոր գծիկներով: Ճյուղագրությունը կազմված է մտավոր ձևով: Չեսագրերի հիշատակարաններում չկային փաստեր նախագաղաքար որինակների վերաբերմամբ, իսկ մեր ձեռագրի տակ յեղած փաստերն անբավար համարեցինք առանձին ձեռագրերի կախվածությունը վարոշելու համար:

5. Շիրակացու տիեզերագիտության լուղարձակ տեքստի և տոմարական աշխատության ձեռագրում վերնագիրն ե «Առ խոստացեալոն»: Տեքստի ուսումնասիրությունից յերեսում ե, վոր առ վոչ թե ամբողջ աշխատության վերնագիրն ե, այլ միայն առաջին դիմի, ներածականի: Վերնագրեց կարելի յէ կուահել, վոր Շիրակացին վորոշ մարդկանց խոստումներ և տվել գրել հման մի աշխատություն և, կատարելով իր խոստումը, ներածականը վերնագրել ե «Առ խոստացեալոն», իսկ աեքստում նշել՝ «Զխոստացեալոն մեր հատուցուք զբանս...»: Շիրակացու այդ ներածականը Պատկանյանի հրատարակած իմբում ընկել ե: Յեւնելով տեքստի բովանդակությունից, մենք նպատակահարմար համարեցինք գիրքը վերնագրել «Տիեզերագիտութիւն և տոմար»:

Ներածականից հետո, 2-ից մինչև 10-րդ դլուխը, Շիրակացին շարադրել ե իր տիեզերագիտությունը: Այդ տեքստը զգալի կրծառաւմներով, պահպանվել և պրոֆ. Ք. Պատկանյանի հրատարակած իմբում:

11 գլուխ մինչև 83 գլուխը Շիրակացին շարադրել ե իր տոմարական աշխատությունը՝ հարց ու պատասխանի ձևով:

Շիրակացու «Առ խոստացեալոն» աշխատության 84-երորդ դլուխը՝ յերապի ժամին ե: Մեզ թվում ե, վոր այս գլուխն ընդմիջարկություն պիտի լինի:

Շիրակացու «Առ խոստացեալոն» աշխատության տեքստից յերեսում ե, վոր պրոֆ. Պատկանյանի հրատարակած «Շիրակացու տիեզերագիտության աստերորդ» գլուխը վո՞չ մի կապ չունի Շիրակացու տիեզերագիտության հետ և Շիրակացու աստղաբաշխության մի գլուխն ե:

Մեր մատենագրաբանի Շիրակացու «Առ խոստացեալոն» պարունակող ձեռագրի մէջ, այդ տեքստից հետո, շարադրված են Շիրակացու «Յաղագս կշոռյ...», «Յաղագս չափոյ...», «Թիւք որչափութեան տանց հին և նոր կտակարանաց» և «Յաղագս չափազութեան արեգական և լուսնի» աշխատությունները: Շիրակացու նյութերի նման դասավորությունը, մեր կարծիքով, չնից և գալիս մեղ և հիմք և տալիս յենթաղելու, վոր Շիրակացու գիտական բնույթ ունեցող առանձին աշխատությունները հավաքված են յեղել մի ժողովածույթի մէջ:

6. Շիրակացու «Առ խոստացեալոն» աշխատության հիման վրա հնարավոր և գառնում պրոֆ. Պատկանյանի հրատարակած տեքստում մտանացուց անել մի շարք պահպանմեր, վորոնք տեղ են գտել ընդորինակությունների ժամանակ:

Պրոֆ. Պատկանյանի հրապարակած տեքստի և «Առ խոստացեալսն» աշխատությունների համապատասխան գլուխների համեմատությունից, ամենից առաջ, պարզվում է, զոր Շիրակացու հրատարակված այդ նույն գլուխներում կրծատված են մի շարք կարեոր հատվածներ։ Կրծատված են մեծամարմար Շիրակացու այն հատվածները, վորոնք իրենց դրվածքով հակասել են հայ յեկեղեցու դոգմաներին։ Եւրենք մի քանի որինակ։

Շիրակացին իր աշխատության «Յաղագս լուսնի» գլխում, խոսելով լուսնի սեփական լույս ունենալ-չունենալու մասին, բերում է քրիստոնեական տեսարանների կարծիքը որինակով։ Նայեցեք, ասում են, լուսատովելին, թե ինչպես ե այդ փոքրիկ միջատը լույս տալիս յերեկոյան։ Նա գիշերվամբնում այնքան լույս ունի, զոր կարելի յև նրան գրքի վրա տանելով կարդալ գրերը։ Հատկանշական են, շարունակում ե Շիրակացին, քրիստոնեական տեսարանների պնդումները, վոր լուսատաթվի այդ լույսը միանդամայն յուրահատուկ լույս ե— նա վո՞չ կարմիր ե, վո՞չ գեղին ե, վոչ բաց կապույտ ե, այլ կանաչի մի տեսակը։ Յեթե լուսատաթվին ունի իր սեփական յուրահատուկ լույսը, ինչո՞ւ չպիտի նույն ունենա և լուսինը։ Այս ասելուց հետո, սակայն, Շիրակացին մեկն շրջադարձ ե կատարում և պնդում ե, զոր ինքը ճիշտ է համարում այն գիտնականների տեսակեալը, վորոնք գտնում են, զոր լուսինն արեգակից ե ստանում լույսը։ «Բայց ես հաւանիմ բազմաց իմաստափութեան՝ յարեղականէ տաել» (Եջ 36)։ Շիրակացու այս հատկանշականի հրատարակած տեքստում կրծատվել ե։ Դա կրծատվել ե, պարզ ե, զորպես հականյանի հրատարակած տեքստում զորակած ամենալավ է։

Շիրակացին իր աշխատության «Յաղագս արեգական» գլխում, խոսելով արեգակի յերկրազնից մեծ լինելու մասին, բերում է մի շարք դեղեցիկ որինակներ, վորոնք դարձյալ կրծատված են Պատկանյանի հրատարակած տեքստում։ Վորպեսզի պարզ լինի այդ հատվածի նպատակադրված կրծատվելու փաստը, մենք անհրաժեշտ ենք համարում բերել այն՝ ամբողջութեալ փաստը, մենք անհրաժեշտ ենք համարում ուր Շիրակացին խոթյամբ։ (Հատվածը անդամահատված է այն տեղում, ուր Շիրակացին խոթյամբ։ Զատվածը անդամահատված է այն տեղում, ուր Շիրակացին խոթյամբ։ Առաջ արեգակի յերկրից մեծ լինելու մասին և բերում և որինակները)։ «Զիցէ արդեօք տեսեալ քո ի գլխոյ բարձր լերանց զծով իւրով մեծանիստ լայնութեամբն։ ո՞րչափ արդեօք փոքր երևեցիք բեր մեծութին նորա։ Եւ կամ ո՞րչափ սակաւեկ տեսանիցես զմեծութիւն նաւու, որ բարձրաբերձ իցէ աղբաղինեալ ուղերձեալ զրազմաշահն վաճառու հանդերձ սարտակ առադատաւուն, որոյ խորչ առեալ գորեալ տանիցի զնաւն յարշաւանի։ այլ թերես իրեն զնագս աղաւնոյ տեսանիցես զնաւն։ կամ չիցէ տեսեալ քո ի բարձրաբերձ բարձրավանդակաց զդաշտ ընդարձակ և մեծանիստ, յորում վարիցին հարկիք եղանց։ Զիա՞րդ թուրիցի քեզ հանդերձ զովովաւն իւրով որ վարէնք)։ զնոսա։ այլ թերևս որպէս զմրջինս գետնագնաց յայլայլոյ օդոյն, որ քայլաց զտեսիլ աշացդ քոյ, ո՞ր ոչ ետ ճշդրտիւ նշմարել զտեսիլ իւրաց հեքայեաց զտեսիլ աշացդ քոյ, ո՞ր ոչ ետ ճշդրտիւ նշմարել զտեսիլ իւրաց զտեսուցա։ քանդի չառնի բատկան լոյս աշացդ զէեպաւորն որպէս զմօտաւորն մանաշել, զի և լերինս բարձունս որ զտեսալ լինին ի միմեանց խորածորիւք։

\* Յերկու ձեռագբում եւ «զովաղաւն... վարեն»։

և յորժամ հայեցեալ տեսանիցեմք ի հեռաստանէ՝ ցածունք և միայալք երեխն։ և ոչ կարեմք նշմարել զխորածորոցն անջրպետու։ այլ և շաբախուն նմանեցուցանեմք։ և որպէս թէ շուրջ զմեօք երեսոցին դաւ։ Զի և աշտարակի չորեկուուիք բուրոր երեխն, և այնպէս թուեսցին թէ շուրջ դաւցեն։ Այս նույն որինակի հիման վրա, Շիրակացին խորհուրդ ե տալիս պատկերացնել արեգակի մեծությունը։

Նման կրծատուներ պրոփ. Պատկանյանի տեքստում կան 23 տեղերում։

Շիրակացու «Առ խոստացեալսն» աշխատության համեմատությունից յերեւում ենակ, վոր պրոփ. Պատկանյանի հրատարակած տեքստի մի քանի քեռուների վերջում աստծուն ուղղված փառարանություններն ընդմիջարկուուկուուների վերջում աստծուն ուղղված փառարանություններն ընդմիջարկուուկուուներն են։ Այսպես 7-րդ գլխի («Յաղագս հիւսիսային սատեղաց») վերջում «և ի փառա արարչին ամէն»— ընդմիջարկուությունն ե, 8-րդ գլխի («Յաղագս լուսնի») վերջում՝ «որ է օրնեալ յաւիտեանս ամէն»— ընդմիջարկուությունն ե։ Շիրակացու տիեզերագիտառության ընդմիջարկուություններից։

Շիրակացու «Առ խոստացեալսն» աշխատության հիման վրա այժմ հնարավոր և կատարել գրչական մի շարք ուղղումներ, վորոնք, պարզ ե, աղամակած ճիշտ է համարում այն պնդիչի կողմից։ Յեղած այդ սիսակները ցույց վաղիքած են լուսիրինակող գրիչների կողմից։ Յեղած այդ սիսակները ուղարկուում են կամար մինք անհրաժեշտ ենք համարում բերել այստեղ վորու որինակներ։

1) Պատկանյանի հրատարակած տեքստում յերկնիքի մասին կարգում ենք, վոր նա «անկորանալի, անխորչ, անփոփ, անզոզ» մի տարածությունն ե (Եջ 35)։

2) Նույն գիլում յերկնիքի մասին լուսելիս Պատկանյանի տեքստում ասված ե, վոր յերկնիքին «տուրածեալ» ձև յաւիտենական կոչեն։ (Եջ 35)։

3) Պատկանյանի տեքստում յերկիրը նմանեցվում է ձվի, ինչպես վոր նրա միջուկը զնդաձեկ գեղնուցն ե, վորը շրջապատված է սպիտակուցով և գնձեպով, այդպես ել նրա նմանությամբ յերկիրը մեջտեղումն ե ապա շուրջ զնովաւ և երկին պատ առեալ զամենայնիւ։ (Եջ 38)։

4) Պատկանյանի տեքստում ծիւրակացու յերկուում յերկնիքի միայն պիտակ, այլ ուղարկուում առաջարկուում առաջարկուում անմօրու սովելիսական (Եջ 39)։

Բնագրում յեղել և վհչ թէ «անփոփ», այլ «անփոր», այսինքն՝ վողորկ։

Նախնական բնագրում յեղել և վհչ թէ «տուրածեալ» այլ «կատարեալ ձեւ յաւիտենական կոչեն»։

Նախնական բնագրում յեղել և վհչ թէ «և ապա շուրջ զնովաւ» այլ «աւդ շուրջ զնովաւ և երկին պատ առեալ զամենայնիւ»։

Նախնական բնագրում յեղել և վհչ թէ «վոսկի դիտակ», այլ «ոսկեզի-սակ»։

5) Պատկանյանի տեքստում արեգակը պատասխանելով Շիբակացու այն հարցին, թե ծածկվելուց հետո ում ես լույս տալիս, պատասխանում եմ, թե՝ էկերանց անփայից և անձանց անկենդանաց տամ լոյս» (Եջ 40)

6) Նույն գլխում «ամենայն զգացութիւնը վերինը և ներքինը» (Եջ 48)

7) Պատկանյանի տեքստում լուսնի մասին խոսելիս ասված ե, թե նա «ճառագայթո բազում» արձակէ յիւրմէ» (Եջ 49)

8) Արեգակի մասին Շիբակացին ասում ե՝ թե «յոյժ սիրելի է... ճառել զառառութիւնն որ ինչ յաղագս տուաշնոյ և մեծի լուսաւորէդ է բան» (Եջ 54)

Կարելի յե բերել բազմաթիվ այլ աղավաղումներ ևս, սակայն բերածները, կարծում ենք, բավական են համոզվելու համար, վոր տիեզերագիտության ներկա ընդարձակ տեքստը մեծ արժեք և ներկայացնում, մինչեւ իսկ հրատարակված գլուխները ճատելու խնդրում։

Պատկանյանի հրատարակած Շիբակացու տիեզերագիտության մեջ նկատվող կը ճառատումները, ընդմիջարկությունները և այլ տիպի աղավաղումները, վորոնք այժմ հնարավոր և մատնացույց անել «Առ խոստացեալոն» տեքստի համեմատության չնորհիվ, հիմք են տալիս յենթագրելու, վոր նախնական տեքստի նման կրծատումները բացառիկ յերկույթ չեն միայն Շիբակացու աշխատությունների նկատմամբ։

7. Տօմարական այս աշխատության մեջ հետաքրքիր ե Հայկի լեզենդի հիշատակումը ԱՅ վլխում։ Շիբակացին այդ գլխում խոսելով ամիսների առաջացման մասին, կանգ և առնում նաև հայկական ամիսների վրա։ «Բայց զամբիսք հայոց ասացից, զի հայ ամսոցդ անուանք յառաջ քան զդնել թուականին հայոց էին։ Եւ ո՞չ քան զայն միայն, այլ և յառաջ քան զմարդեղութիւն բանին ասառածոյ՝ անուանեալ էին տիփոքիկ, և այս է պատճառն։ Զի Հայկ ոմն անում աղեղնաւոր հակայ՝ յաղըէ Յարեթի, որդույ Նոյի, և եւալ ի Բաբիլոնէ՝ տիբեաց հայոց։ Եւ բնակեալ ի հայո։ և յանուն նորս կոչեցան հայք, նոյնպէս և գստերաց եղ զանուանն. զոր առեալ հայոց զանուան ուստերաց և գստերաց նորա՝ եղին ի վերայ ամսոցդ վասն մեծարանց հօրն և զաւակացն. և են այսոքիկ։ Նաւառադի. Հոսի. Սամմի. Քաղոց. Արաց. և Հրոտից, որդիք էին Հայկին։ Խոկ Մարգար և Հարաւանց զոր այժմ Ակի կոչենք, այս ի դործոց անուանեցան, զի ըստ այն ժամանակս ամառ-

նախնական բնագրում յեղել ե վնչ թե «անփայից», այլ «ափափայից» այսինքն լեռ-ապառաժներին։

Բնագրում յեղել ե վնչ թե «զգացութիւնք», այլ «զոյացուրիւնքն վերինը և ներքինք»։

Նախնական տեքստում յեղել ե վնչ թե «բազում արձակէ» այլ «ճառագայթութու բաց արձակէ» յիւրմէ։

Նախնական բնագրում եղել ե «զգառասուրիւն», որ ինչ յաղագս առաջնոյ և մեծի լուսաւորէդ է բան»։

Նայինք էին սոքա (Եջ 68—69)։ Հայկի այս լեզենդան հին հայկական մատենագրության մեջ հիշատակվելու չորրորդ փաստն ե ուս։ Առաջինը հիշատակված է նորենացու, յերկրորդը՝ Սեբեռոսի, յերրորդը՝ Թեօնի և չորրորդն—այս։

8. Պատկանյանի հրատարակած տեքստի կրծատված մասերից հետաքրքիր նյութ են հանդիսանում քաղցեյական զրույները, վոր մեջ և բերում Շիբակացին «Յաղալաւ երկնային զարդուց» զլիում։ Դա իր ծավալով մոտ կես մամուլ նյութ ե։ Շիբակացին սկսում է քաղցեյական սովորություններից, վորոնք ծնված յերեխայի բախտը կազում են առանձին կենդանատեսակների հետ «Զիոյէն ասեն թէ՝ զլուս է աստեղատանց թժ անիցն, և չորհատու զի և խոյ զլուս է հօտի և պարզեատու. զի առանց արտառութեան մարգարեատու յիւրմէ։ և դարձեալ անդատինի յիւրմէ։ և դարձեալ անդատինի յիւրմէ։ և հանդպարզորդ։ Նոյնայիս և զամսեղատունն ասեն ըստ նորին նմանութեան։ Ասեն թէ որ ի նմայն ծնանի՝ գեղեցիկ լինի և փարփառ, զանդրացեր, ծաւի, զուարթատես, բարերարույ, մեծ ու ճոխ լինի։ Զցլէն ասեն թէ՝ ըստ նմանութեան ցլու զրաւոր և անձնեայ է... զկարձէն ասեն՝ թէ որ ի նմայն ծնանի՝ չարփառ և մարդասպան՝ ըստ օրինակի կարծի, որ հանապազ հարկանել կաղմըն կայ. . .» (21—22)։


Քաղցեյացիների մեջ խոսում են, ասում ե Շիբակացին, վոր դյութելու միջոցով կարելի յե լուսինը յերկնքից իջեցնել դետին։ Նա քննադատության և յենթարկում քաղցեյական այս զրույնը և զարդացած բացականչում։ «Օն անդր և ի միտ անդամ ուրբուք մի եկեսցէ այսպիսի անկարգութիւն առասպեկտական բանից» (Եջ 24)։

Շիբակացին հատկապես սուրբ քննադատության և յենթարկում քաղցեյական սովորությունը՝ յերեխայի ծնված ժամանակով չար ու բարի վորոշելու խնդրում։ Այսինչ ժամին ծնվածը Հոռի լինի ասեն, գլխավոր քաղաքաց, մեծատուն և զօրաւոր», մի այլ ժամի ծնվածը մուրացկան լիլինի և «Թափառական շրջի տուն ի տանէ և տեղի ի տեղուղի և հազիւ կարէ ժողովել զաւորս ոոճիկի»։ Քաղցեյացիները յերեխայի բախտն, ասում ե Շիբակացին, վորոշում են վայրկաններով։ Բայց այդ, քննադատում և Շիբակացին, միանդամայն անհնար և մանկարարձուէին, վորը զրաղված և յերեխայի կենանի թե մահացած, տղա թե աղջիկ ծնվելու հարցերով և պրատը կարելու գործով, յե՞րբ ժամանակ ունի վորշում և յերեխայի վոր ժամանակ ծնվելու հարցը։

Շիբակացուն շատ և զարդացնում մանկավանդ քաղցեյական այն զրույնը, ըստ վորի յերեխան համապատասխան առանձին ժամերի՝ կարող և չար ժընքի կամ բարի։ Յեթե անմեղ յերեխան սկզբից չար և ստեղծվում, այն ժամանակ «յոյժ չար իցէ» նրա ստեղծողը, քննադատում և Շիբակացին։ Այսուհետեւ, յեթե ժամը մեջ չարությունը նախորդը արարչից է դրվագ, ինչո՞ւ ժամար և այդ դեպքում որինքը, ինչո՞ւ համար են դամարդկաները, վորոնք պատժում են գողին, սպանողին, չարագործին։ Ինչո՞ւ յեն նրանք պատժում չարագործներին ուղղելու համար, յերբ նրանք իրենց յյությամբ չար են ստեղծված և անկախ իրենց կամքից՝ չարագործում պիտի անեն։ Ին-



չափով ողտվել եւ: Սակայն նա ողտվել եւ քննադատաբար, շարադրելով իւ սեփականը, որիդինալը: Նրա մի շարք արտահայտություններ՝ «Ես ո՛չ ընդունիմ», «Ես ո՛չ հաւանիմ», «Ես զանց առնեմ», «Բավական է ճառել զանց համ պատմութիւնո նոցա», «ատելի է ինձ» և այլն, ցույց են տալիս Շիրակացու ինքնուրույնությունը:



Մի եջ Շիրակացու «Յաղադս կըոց և չափոց» աշխատությունից:

Հասկանալի ե, վոր Շիրակացու առաջադրած գիտական մի շարք հարցեր, ունեն վորոշ թերություններ և անձատություններ: Այդ չե կարևորը: Կուրտուրայի և գիտության զարգացման այն ժամանակվա մակարդակում նման անձատություններ ու թերություններ անհուսափելի եյին: Կարեսրն այն է, վոր ՎՊ դարում, 1300 տարի մեզանից առաջ, Շիրակացին խիզախությամբ, այն ժամանակվա դիտության բարձունքներից դնում ե գիտական մի շարք հարցեր և նրանց ճիշտ լուծում ե ատլիս:

Զպիտի թագցնել, վոր Շիրակացու մոտ կան կրոնական բովանդակություն ունեցող բազմաթիվ դրույթներ, տեղեր, ուր նա պաշտպանում ե քը բիստոնեյական այս կամ այն տեսակետը: Իր աշխատության վորոշ տեղերում նա հիմնավորումներ ե բերում անդամ կրոնական գրքերից: Սակայն ուշ բանում Շիրակացուն զատապարտելու վոչ մի հիմք չկա: Նա իր ժամանակի ժարդն ե և տվել ե իր տուրքը: Բացի այս, Շիրակացին անշափ վախեցել և հետապնդումից: Վորոշ գեպօում նա ակամա ստիպված ե յեղել համաձայնվել ժամանակից կրոնական գերիշխող գողմաների հետ: Թե նա վորքան ե վախեցել հալածանքներից, դա կարելի յե տեսնել յերկրազնդի հակառակ կրողմում յերկրների և բնության համար արած իր մի պնդումից, վորը նա ներկայացնում ե յերազի միջոցով: «Եւ արդ մի զիս եակրէք, ոիրելիք, գիտէն ծածկագէտն, զի ո՛չ ստեմ: Մինչեւ էի յաղօթս առ առաւտուն ի վկայարանի սրբոյն ներկնեայ և միտք իմ յայս խորհուրդս ծփէին՝ քուն էառ զիս: Եւ տեսանէի որպէս թէ արեգակն ի ծագելն խոնարհեալ յերկիր իջանէր: Եւ ես յատաշն ընթանայի և ի գիրկս ընդունէի զնա, և նա էր պատանի անմուրուս, ոսկէիսակ, և ըրթունք բերանոյ նորա որպէս թէ ոսկով լինէր օծեալ և ինքն սպիտակս և փայլումն զգեցեալ հանկերճն. և լոյս սաստիկ ելանէր ի բերանոյն: Ալացի ցնա՝ եթէ ի վաղնջուց ցանկացեալ էի ի քէն լսել բանարդ՝ աղէ պատմեա ինձ, եթէ յորժամ ի մէնջ ծածկիս ո՞ւմ տաս լոյս, գո՞ն կինդանիք ի ներքոյ երկրի՝ եթէ ոչ: Եւ նա ասէ՝ ո՛չ, այլ լերանց և առփափայից ձորոց և անձաւաց անկենդանեաց տամ լոյս...»: Կասկած չի կարող լինել, վոր Շիրակացին վախենալով հարցի բացարձակ գրումից, յերազի միջոցով ե հայտնում իր կարծիքը:

11. Շիրակացու տիեզերագիտության և տոմարական աշխատության ներկա տեքստի համար Հիմք ե ընդունվել մեր մատենադարանի թիվ 2367 ձեռագիրը, վորը, մեր կարծիքով, մեզ մոտ յեղած ձեռագրերից լավագույն տեքստն ե: Այդ տեքստում, բացառությամբ մի քանի բառերի, վորոնց մասին Հիշված ե ներքում, չն կատարված ո՛չ գրչական և ո՛չ ել կետագրության ուղղումներ: Այդ ձեռագրի հետ համեմատված և ներքին լուսանցքում նշանակված են միայն Պատկանյանի հրատարակության խմբի, թիվ 2180 ձեռագրի և ամենահամառոտ խմբի ձեռագրերի տարբեր ընթերցումները: Նշված են բոլոր նկատված տարբերությունները: Մի շարք տարբերություններ, որինակ առ, դա, նա և այլն հաճախ դրված են լինում «Ճ-ով-նայ, սայ, գայ, կամ «Ճ-ով» գրված ե լինում «աւ-ով», վորոնք իբր յերկրորդական տարբերություններ, մենք ավելորդ ենք համարել նշել ներքին լուսանցքում, վորովհ-

առ նրանք տեքստը մեծացնելուց բացի վորեւ այլ արժեք ներկայացնել չելին կարող:

Մենք նպատակ չենք ունեցել կազմել Շիրակացու աշխատության բոլոր ձեռագրերի համեմատական տեքստը: Այդ նախաձեռնելու համար, պարզ է, վոր ձեռքի տակ պիտի ունենայինք այլ մատենադարաններում յեղած Շիրակացու յեթե վոչ բոլոր, ապա գոնե կարևոր ձեռագրերի տեքստերը: Մեր նպատակն է յեղել այստեղ տալ Շիրակացու տիեզերագիտության ընդարձակ տեքստը և տոմարական աշխատությունը՝ նկատվող կարևոր գրչական տարրեր ընթերցանություններով՝ մեր մատենադարանի ձեռագրի սահմաններում միայն:

ՊԱՆՈՒՅԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԵջ ԳՈՐԾԱԾՎԱԾ ԿՐՃԱՏՈՒՄՆԵՐԸ

### ԱՇ. ԱԲՐԱՀԱՄՅԵԱՆ

7 հունիսի 1940 թ.

Ա=Պետ. մատենադարանի թ. 2180 ձեռագիր:

Բ=Պետ. մատենադարանի թ. 2762 ձեռագիր:

Գ=Պրոֆ. Ք. Պատկանյանի հրատարակած տեքստ:

Դ=Պետ. մատենադարանի թ. 1979 ձեռագիր:

Ե=Պետ. մատենադարանի թ. 1973 ձեռագիր:

ԶԶ=Ձեռագրերը:

ՆՀԲ=Նոր հայկական բառարան:

ՅԱՆԿԱ ԳԼԽՈՅՑ ԳՐՈՅՍ  
ԱՆԱՆԻԱՅԻ ՇԻՐԱԿՈՒՆԻՈՅ ՀԱՄԱՐՈՂԻ

1. Առ իոստացեալսն
2. Յաղագս երկնի
3. Յաղագս երկրի
4. Յաղագս ծովու
5. Յաղագս երկնային զարդուց
6. Յաղագս որ ի մէջ երկնի և երկրի են շարժմունք և տեսութիւնք
7. Յաղագս կաթին ծրոյ
8. Յաղագս հիւսիսային աստեղացդ
9. Յաղագս լուսնի
10. Յաղագս արեղական
11. Պատճառ Շ եակ աղիւսակի երրայեցոցն
12. Բուն չըշագայ ՇլԲ ամաց
13. Զի՞նչ (է) ժամանակ և կամ զի՞նչ (է) հողով ժամանակաց
14. Զի՞նչ է ողոմպիստ
15. Զի՞նչ է ընդիքտիոնն
16. Զի՞նչ է բեսեքիստոնն
17. Զի՞նչ է յորելեանն
18. Զի՞նչ է թուտկանն
19. Զի՞նչ է նահանջն
20. Զի՞նչ է նահանջից նահանջն
21. Զի՞նչ է թ և ժ երեակ
22. Զի՞նչ է իլ եակը
23. Զի՞նչ է բորմաղ
24. Զի՞նչ է կաղանդ և կաղանդիկոս
25. Զի՞նչ է նոնոսն
26. Զի՞նչ է իլոսն
27. Զի՞նչ է հնդեակն
28. Զի՞նչ է վեցեակ
29. Զի՞նչ է վերադիր
30. Զի՞նչ է է երեակն

31. Զի՞նչ է միջոցն
32. Զի՞նչ է լոռումն զատկի
33. Զի՞նչ (է)՝ որ և թիւ ժամ կատարեմք
34. Զի՞նչ է՝ որ զի թիւն օր կատարեմք
35. Զի՞նչ է որ Դ կրկնեմք զքանիս լուսնին՝ յորժամ գիշերի զորչափ դնարել կամիցիմք գիտել
36. Զի՞նչ է՝ որ ԲԺ անապատկեմք՝ յորժամ ի կենդանատեսակն զանում կամիցիմք գիտել
37. Զի՞նչ է՝ որ զեկամուտն ի նահանջն յաւելիսն ասեն երրայեցոց և

ՄՅԼՈԳ...

38. Զի՞նչ է՝ որ ԺԲ ամիս է տարին
39. Զի՞նչ է որ Յկե օր է
40. Զի՞նչ է տարին և ամն
41. Զի՞նչ է տումար
42. Զի՞նչ է ամիսն
43. Զի՞նչ է կրկնակ ամսոցն
44. Զի՞նչ է կիսակ
45. Զի՞նչ է ըրջանն
46. Զի՞նչ է՝ որ Երթամք իլ իլ յորժամ ի երեակ առնեմք
47. Զի՞նչ է զնալն իլ իլ ն և զի մասն ի վերայ բերել
48. Զի՞նչ է՝ որ Երթամք ԺԹ ԺԹ յորժամ վերադիր առնեմք հոսմի
49. Զի՞նչ է՝ որ ի Ժ Երորդ կանոնին թիւ մի յաւելու
50. Զի՞նչ է բազմապատկեալն յաւելու
51. Զի՞նչ է ըստ նահանջիցն պակասեցոյ
52. Զի՞նչ է ըստ ԹԺ Երեկաց յաւել
53. Զի՞նչ է Լ հանապազորդ Երթն
54. Զի՞նչ է Երթն Լ Լ
55. Զի՞նչ է Գ ի վերայ բեր կամ Դ ի բաց Երթ
56. Զի՞նչ է՝ որ օրն իԴ ժամ է
57. Զի՞նչ է՝ որ ժամն և մասն է
58. Զի՞նչ է՝ որ թաւալմամբ զնայ արեգակն
59. Ո՞րպէս գիտացին թէ թաւալի արեգակն
60. Զի՞նչ է՝ որ Շ ասպարէզ է Ա. առաջնաղացումն արեգական
61. Զի՞նչ է՝ թէ մինչ Ա. թաւալի արեգակն՝ մէկ մասն անցանէ յօրէն և մինչ Լ. թաւալի՝ ժամ մի
62. Զի՞նչ է՝ որ ի գիշերի ընդ երկրաւ դառնայ արեգակն
63. Զի՞նչ է՝ որ ամսամտին ասէ՝ կալ թիւ մի
64. Զի՞նչ է կալ հանապազ Լ
65. Զի՞նչ է՝ որ ասէ կալ հանապազ ին
66. Զի՞նչ է՝ կալ ժԳ և զնահանջն
67. Զի՞նչ է՝ որ յայտնութեան ոչ ասէ արկանել ի վերայ, այլ ասէ՝ կալ զնահանջն և տուր մեհեկի

68. Զի՞նչ է որ ասէ՝ կալ և զվերադիրն երթ առանց կիսակի  
 69. Զի՞նչ է կալ և  
 70. Զի՞նչ է որ ասէ՝ թէ քան զհասարակածն աւելի է ի նոյն աժմեան է  
 լրումն և թէ պակասէ՝ յառաջին ամիսն ելանէ  
 71. Զի՞նչ է թուական հոռմայեցոց  
 72. Զի՞նչ է՝ կալ մինչև յ լԴ ամն Յուստիանոսի կայսեր և յ ԻԴ Առու-  
 բովու պարսից  
 73. Զի՞նչ է տեսանել զնահանջ կամ ժթ եղեակ  
 74. Զի՞նչ է ած ի վերայ թժ եւեկին  
 75. Զի՞նչ է երթ ըստ նահանջիցն Ա և Թող  
 76. Զի՞նչ է ժէ ն ապրիլի և կամ ին մարտի. ո՛չ նահանջ և ոչ բաշ-  
 մաղատիկ  
 77. Զի՞նչ է՝ որ ի մարտի և յապրիլի լինի ժֆաներորդն զատկաց  
 78. Զի՞նչ է՝ որ ի փետրուարի վերջին տւուրն անկանի օրն նահանջի  
 79. Զի՞նչ (է) Ա թիւ որ յաւելու յիերեակն  
 80. Զի՞նչ է բոպէն  
 81. Զի՞նչ է Ե երորդ աւուրն աւելեաց  
 82. Զի՞նչ է՝ որ ի մարտի ին է հասարակածն միշտ  
 83. Զի՞նչ է լոյսն գերազանց:  
 84. Պատմութիւն յաղագս զերազս դիտելոյ սաղմոսիւք՝ և մեկնելոյ:

## ԱՆՍՆԻՍՅԻ ՃԻՐԱԿՈՒՆՈՅՑ

### ԱՄ ԽՈՍՏԱՅԵԱԼՄՆ

Զիսոստացեալսն մեր հատուցուք զբան՝ յարտաքնոցն  
առեալ զառարկութիւն։ որպէս զի յետոյ յեկեղեցականն  
ելեալ մեր՝ գեղեցիկ հետեւսցի չարադասեալ ընդունակք։  
Զի և օրինակն այսպէս և ճշմարտութիւն կարդաւորեցաւ։  
Արդ՝ ևս կամիմ ուստանիլ յարտաքնոցն յանցանէ, ուստի  
Պօղոս ինձ հրամայէ։ և զանց առնել զհեթանոսական խե-  
լազարութեամբն՝ բանդագուշեալ իմաստնոցն ճառիւք, որք  
10 զաստուած ո՛չ կամեցան ճանաչել, և պատճառո լինելու-  
էջ 102 թեան զհիւղէ ասացին և նիւթ գոյիցս եղելոց։ Զորոց || ո՛չն  
երկրորդեսցուք ճշդիւ, և ո՛չ ընդդիմալրեսցուք իբր ար-  
դարև զարհուրելիս։ Բաւական է նոցա կշտամբութիւնն՝  
որ ի Սրբոց Հարցն։ Բայց հաւանիմ յիսկզբանն փոքր ինչ  
15 յիշատակել և զանաստուածիցն բարբաջանո՞ և ի նոյն լքա-  
նել և այս՝ զի քաջալաւութիւն վեհագունիցն առաւել գե-  
ղեցկապէս երեւսցի; Եւ եթէ յայլում ուրեք վայրի յիշես-  
ցուք զառ ի նոցանին ճառեալ բան ինչ զուզնաքեայ, նոյն  
պատճառ է վասն նոխացուցանելոյ դլաւացն՝ վատթարացն  
20 յիշատակաւ։ Այլ ինձ ասելի է յարտաքնոցն բարեաց վկա-  
յութեանց, ըստ սրբոյն Պօղոսի ճառել յաստուածածանն ի-  
մաստնոցն՝ որք զմի աստուածութիւնն խոստովանեցին՝ ա-  
նել և ամենակատար, պատ||ճառ ամենայն եղելոց՝ երեւելեաց,

- |   |   |
|---|---|
| 4 Ա—զառակութիւն<br>9 Ա—բանդայգուշեալ<br>10 Ա—«զամենայն» փի, «զաս-<br>տուած» (բնագրում յեղել և<br>«զած», զբիչը սխալմամբ կար- | դացել և «զամ», այն և «զա-<br>մենայն»<br>13 Բ—կշտամբութիւն<br>18 Ա—ճառել |
|---|---|

և իմանալեաց : Ոմանք ասացին թէկ սրբոյ երրորդութեան  
 իմացան նոքա զիսորհուրդու . զոր և երանելի աստուածաբանն  
 Գրիգոր յիշէ ասելով, թէ յորժամ յաղագս առաջնոյ և ևս  
 երրորդի պատճառին իմաստասիրէրն՝ զայս ոմանք կարծեցին  
 5 սրբոյ երրորդութեանն լինել խորհուրդ : Բայց ես ո՛չ հաւա-  
 նիմ, քանզի աստուածային առաքեալն ասէ . «Զիսորհուրդն  
 որ ծածկեալ էր յամենայն յաւիտեանցն՝ որ այժմ յայտ-  
 նեցաւ» : Եւ ինքն գրկիչն ասէ . «Գոհանամ զքէն, չա'յը,  
 էջ 103 տէ՛ր երկնի և || երկրի, զի ծածկեցեր զայս յիմաստնոց և  
 10 ի գիտնոց» : Իսկ մարդարէիցն բանք որ ինչ յաղագս սրբոյ  
 երրորդութեան են Աստուածային հոգուոյն աղդումն : Բայց  
 մարդկայինն իմաստութիւն այնմ մեծութեան ո՛չ եղեւ հա-  
 սու : Բայց զմինն ճշմարտապէս ծանեան զաստուած . և փա-  
 ռաւորեցին բանիւ և գործով : // Բանիւ խոստովանել գովե-  
 լով զարարէին ամենայնի, և գործով մաքուր լինել յախ-  
 տից և յամենայն ցանկութեանց և ի զբաղմանց աշխարհա-  
 կանաց ազատեալ առանց ամուսնութեան միանձունք զմիայ-  
 նաւորութեան կալեալ զվարս . որք զորովայնս դաստիարա-  
 կեցին պարկետութեամբ : Քանզի ո՛չ միս և ո՛չ ձուկն ու-  
 տէին՝ և ասէին . մի՛ արասցուք զորովայնս մեր գերեզման  
 այլոց կենդանեաց . այլ միայն բանջարաւ և պտղով ծառոց  
 [479ա] կերակրէին . նոքա || միշտ զհետ բարեաց գործոց երթային .  
 պարապէին զանազան իմաստից քննել և ճառել : Յորոց և  
 մեր առեալ նիւթ ի մերումս շարադրեսցուք բանի, սկսեալ  
 25 յերկնէ և եկեալ յերկիր : Եւ դարձեալ անդրէն ի յերկին  
 համբարձեալ՝ խորհրդով զարդուն հրճուեցայց յառաջ խա-  
 զացուցեալ զբանս՝ ճառ զմառից ելեել արարից :

էջ 104

|| Բ. ՅԱՂԱԳՍ ԵՐԿՆԻ

Ճշմարտիւ թուի ինձ և ամենեցուն որք են ի տեսական  
 ուսումնասիրութեան, և ի քաջ առաջնոցն ասացեալքն բանն  
 ո՛չ ինչ անճառելի է . և մտաց ո՛չ ինչ հասանելի է :

1 Ա—երրորդութեանն

9 Ա—իմաստնոց

11 Ա—ասլումն

12 Ա—մարդկաին

17 Ա—ազատել

իսկ արդ՝ որովհետեւ ի մտաւորն եկաք բան, հարկաւոր է  
 թէ և յանմարմինն ելցուք տեսակ . ապա ուստի արժանն է՝  
 սկսանելի է : Իսկ սկսանելին ասի յանսկիզբն է սւմեմնէ .  
 5 սապա ուրեմն անսկիզբն անասաց և անճառելի մնաց, սա-  
 կայն իմանալեաւն իմանի : Իսկ որ իմանի՝ ապաքէն մտացն  
 իմանի : Իսկ միտքն զիա՞րդ կարասցեն հասու լինել անճա-  
 ռելոյն, եթէ ո՛չ ունիցի յանդութիւն ի նմին իմանալոյն :  
 Իսկ որ ունին յանդութիւն, բերէ և զնորին ճշմարտութիւն :  
 Արդ՝ եթէ ինքն իմանալին կամեսցի, նորունն յանդակցի  
 10 մտացն եկեսցէ ի ճառելին : Ո՛չ զորպիսութիւնն գիտելով,  
 այլ զեռութիւն գոյութեանն իմանալով : Քանզի որ իմանալին  
 է՝ և անեղ է : Իսկ որ անեղն է՝ նոյն և անարար է . իսկ  
 [479բ] որ անարարն է՝ նոյն և անթեղի է . ինքն է տեղի ամենե-  
 ցուն : Եւ որ անարարն է, արարիչ է բոլորեցուն : Ասացք  
 15 զնա և անեղանելի . ապա յայտ է թէ եղեալքս ի նմանէ  
 սկիզբն առին լինելոյ . իսկ յորմէ սկիզբն առին, նա գեր  
 էջ 105 ի վերոյ մնաց քան զսկսեալս : Այսպէս փիլիսոփայքն || բա-  
 րիք միաստուածութիւն խոստովանելով հրէարար ասացին՝  
 որպիսութիւնն նորա ո՛չ մտօք նկատի և ո՛չ բանիւ բո-  
 թէ որպիսութիւն կենդան ո՛չ մտօք նկատի և ո՛չ բանիւ բո-  
 թէ որպիսութիւն արարիչ երեելեաց և իմա-  
 վանդակի . և նա՛ է սկիզբն և արարիչ երեելեաց և իմա-  
 20 վանդակի . և նա՛ է սկիզբն և արարիչ երեելեաց և իմա-  
 վանդակի . Եւ եղեալքս ի նմանէ են թուով չորք : Առաջինն  
 նալեաց : Եւ եղեալքս ի նմանէ են թուով չորք : Առաջինն  
 հուր : Երկրորդն՝ հողմ : Չորրորդն՝ ջուր :

1 ♡—տեքստը սկսվում է ևլորդ  
 որովհետեւ ի մտաւորն եկաք  
 բանն» :

2 ԱԲ—տեսակը (Պ. տեսակ)

4 ♡—ավագքէն» փիս. «ապա»

4 Ա և Բ—անսասաց չիք  
 5 Ա և Բ—իսկ որ իմանի՝ ապա-  
 քէն մտացն իմանի» չիք

6 ♡—կարիցեն»

6—7 ♡—«անելուոյն» փիս. «անճա-  
 ռելոյն»

8 ♡—«զնորա» փիս. «զնորին»

8 ♡—զճշմարտութիւնն

9 ♡—յանկազի, ԱԲ—յանդանկ-  
 ցի (ուղղումը մեր կողմից ե)

10 ♡—ճառուելին» փիս. «ի ճառելին»

10 Բ—որպիսութիւն

12 ♡—«անեղ» փիս. «անեղն»

12 Բ—որ անեղ է

12 ♡—անարար

16 ♡—յումմէ սկիզբն առին

17 ♡—«բարի փիլիսոփայքն» փիս.  
 «փիլիսոփայքն բարիք»

19 ♡—«եթէ» փիս. «թէ»

19 ♡ տեսութիւն

19 «կամ» փիս «և ոչ»

19—20 Ա—բովանտակի

20 ♡—«ամենայնի» փիս. «երեե-  
 լեաց և իմանալեաց»

21 ♡—չորս

21 ♡—«առաջինն» չիք

22 ♡—«երկրորդն», «երրորդն» և  
 «զորքորդն» չիք

Եւ զհոգին փչումն աստուածային ասացին և ո'չ նիւթական  
արարած՝ այլ աննիւթ, թէպէտ և արարած. և գիտելի է  
նմա՛ միայնոյ՝ որ արար զնա: Այլ երկինք և երկիր և որ  
ի միջոցին են հաստատութիւնք ամենայն որ ի նոսա, յա՛յս  
նիւթոց կազմեցան՝ հրամանաւ արարչին. և ունին խառ-  
նուածս միարանութեան առ միմեանս հաղորդութեամբ: Եւ  
է հրոյ բնութիւն՝ ջերմ և ցամաք: Եւ օդոյ բնութիւն՝  
ջերմ և խոնաւ: Եւ ջոյց բնութիւն՝ խոնաւ և ցուրտ: Եւ  
հողոյ բնութիւն՝ ցուրտ և ցամաք: Եւ ի հա-  
ղորդելն ընդ միմեանս՝ առնուն և ի բնութենէ մի-  
[480ա] մեանց: Արդ՝ սոյցա արարիչն յառաջազոյն նախի|ախնամու-  
թեամբն տեղի ոչ պատրաստէր, քանզի մարմին գործէր:  
Իսկ մարմնոյ դիրք հաստատութեամբ պիտոյ էին. իսկ  
հաստատութիւն նախ և առաջին՝ որ դեղին ունիցի. և  
այլ երեքն ևս ըստ նովաւ յարմարեալ պատկանիցին: Արդ՝  
ահա՛ հասաք ի կէտն՝ ո'չ ի գուզնաքեայ, այլ ի  
չջ 106 մեծ և ահազին երկինն վերին, որում || յոյնք եթերն  
կարդացին. և հելենացիք հուր թաղկեալ ասացին, զորս  
և բաղումք յեկեղեցոյ հաւանեցան: Թէպէտ և չարաց  
փիլիսոփայիցն ո'չ թուեցաւ հաճոյ! քանզի կէսքն ի նո-

- 1 Պ—աստուածային փչումն
- 2 Պ—աստուած» փիւ.  
«արարած»
- 3 Ա—միայնոյ, Պ—միայն
- 4 Պ—(«միջոցիս» կրծառված և  
մինչև «որ ի»)
- 5 Պ—«ի նիւթից» փիւ. «յայս  
նիւթոց»
- 6 Պ—ավելացրած «որ արարն  
զնա»
- 5 Պ—ունի
- 6 Պ—հաղորդության
- 7 Պ—բնութիւն հրոյ
- 7 Պ—«բնութիւն» ջեր
- 9—10 ԱԲ—հաղորդեալն
- 13 Պ—հաստատութեան
- 14 Պ—«ևս» փիւ. «և առաջին»
- 14 Պ—դեղի
- 15 ԱԲ—ընդ նովաւ (ըստ գործիւ-

- կանով անսովոր ե, բայց մենք  
պահեցինք, վրովինեակ բնա-  
գում այդպես եր).
- 16 Ա—ոչ է
- 17 Պ—տեքստն սկսում և «արդ  
յոյնք...»
- 17 Պ—մեծն
- 17 Պ—յահազին յերկինն
- 17 Պ—եթեր
- 18 Ա—հելենացացիք
- 18 Պ—«քաղդեացիք» փիւ. «հել-  
ենացիք»
- 18 Պ—«որում» փիւ. «զորս»
- 19 Ա—եկեղեցոյ
- 20 Ա—փիլիսոփայոցն
- 20 Պ—«թուեցաւ հաճոյ»-ից հետո  
կրծառված և մինչև 5-րորդ  
եշի 21-րդ առող—«աւելորդ  
է մեզ»

ցանէ երկինս բազումս և աշխարհս անհամարս ասացին: ~~Հ~~  
Եւ կէսք ի նոցանէ ի մի տարր երկինի զերկինս ամենայն  
ձուլեալ ասացին. և զնիւթոյն ասացին՝ եթէ է այլ իմն  
բնութիւն պարզ, օտար ի չորից բնութեանց, զի ո'չ հուր է և  
ո'չ օդ, ո'չ հող և ո'չ ջուր, այլ այլ իմն է ասեն, լու-  
սաւոր և խիստ, որպէս զբնութիւն պաղպաղակի. և կամ որ-  
պէս զվանակնէ, ասեն եթէ ի ջրոց որ պաղեալ խստանան՝  
մեծաւ հաստատուն կցուածով առնու փոփոխումն՝ զալ ի  
կերպարանս ականց պատուականաց. և ասեն՝ եթէ վանակն  
10 պայծառ լուսաւորութեամբն և պաղպաղակն մաքուր և  
պայծառ յստակ գեղեցկութեամբն՝ նման են լուս||աւորութեան օդոյ  
[480բ] յստակ գեղեցկութեամբն՝ նման են լուս||աւորութեան օդոյ  
և ջրոյ, յորոց առնուն նորա զօրինակն նիւթոյ հաստատու-  
թեան: Բայց ինձ արդարեւ ծաղու և եսերանաց արժանի  
թուկն, «ոք զանձինս առ իմաստունս ունէին և յիմարեցան:

15 Որք զերկին և զերկիր անսկիզբն և անկատար ասացին,  
որպէս ոք զի տեսանիցէ զիր բոլորակ գրոշմեալ յումէ և  
իցէ. և վասն զի ո'չ էր ինքն ի տեղն, յորժամ համաւ դիրն  
էջ 107 բոլորակ. և չերեւի թէ ուսա||ի լոցէ սկսեալ. և կարծիցէ  
թէ անսկիզբն է: Բայց պարտ է նկատել մտօք, եթէ որ  
20 եհանն զնա անդէն, արար նմա սկիզբն, և նոյն նովան-  
դակեաց զնա կատարմամբ: Եւ արդ՝ աւելորդ է մեղ վասն  
նոցա յերկարաբանել, լքեալ թողցուք զիստեալսն և գարձ-  
ցուք անդրէն ի կէտն ահատոր, որ է երկինն վերին, որում  
յոյնք եթերն կարդացին և հելենացիք հուր թաղկեալ  
ասացին: Եւ է նա մարմին անչարչաելի, հուր պարզ,  
25 ասացին: Եւ կ նա մարմին անչարչաելի, հինքն յինքնէն, ինքն ա-  
ռանձինն մարմին անհատ, անտեղիտալի, անկորանալի, ան-

- 6 Ա—զբնութեան
- 9 Բ—զգալ ի կերպարանս
- 12—13 Ա—հաստատութեանն
- 16 ԱԲ—«յումէ» փիւ. «յումմէ»
- 17 ԱԲ—«ի տեղն» փիւ. «ի տեղովն»
- 19 Ա—նկատեալ
- 20 ԱԲ—էանն
- 21 Պ—մեղ աւելորդ է
- 22 Պ—«զնոցայն հառել» փիւ.

«վասն նոցա յերկարաբանել»  
Ա—երկարաբանեալ  
23 Պ—«որ է երկինն վերին» չիք  
24 ԱՊ—եթէր  
24 ԱԲ—թափկեալ  
24 ՊԻ—«քաղդէացիք» փիւ. «հել-  
ենացիք»  
26—27 Ա—«առ առանձինն» փիւ.  
զասանձինն»

Խորշ, անփոթ, անդող, պատ առեալ զամենայնիւ, փակեալ  
 զգոյսս ընդ իւրե տարածեցաւ, կալաւ բոլորն բոլորակ  
 [481ա] || երկնից թաղուն սերտութեամբ զտարերս ընդ իւրեաւ. և  
 բաւական եղե մեծատարած շրջան նորա՝ որ պատեաց զա-  
 5 մենայն արտաքուստ, ցուցանել զմեծ ծոց փորուածի նորա  
 բոլորակ դնդաճե՝ զոր նոքա կատարեալ ձեւ յաւիտենական  
 կոչեն՝ շրջագայ անդադար երագութեամբ անչափելի և ան-  
 թուելի և անտեսանելի. միայն իմանալի. ո՛չ ամենեցուն՝  
 10 այլ միայն որ զիմանալիսն իմանան. ո՛չ որպէս կարին,  
 էջ 108 անուանեն : Եւ || ի ներքոյ պրկմանն ըստ նմին ձեացեալ կայ  
 հաստատութիւնդ՝ զոր կոչեմք երկին, և ասեն զդմանէ  
 թէ ջուր է և օդ: Ո՛չ պաղեալ և ո՛չ թանձրութեամբ խրա-  
 15 տացեալ: Այլ ջուր է ճշմարիս լոյժ բնութեամբ՝ որպէս  
 զաստիս. և օդոյն վչեալ ուսուցեալ գովեաց որպէս պղպը-  
 ջակը որ վչեալ բոլորին օդով և ի խոնաւութենէ անձ-  
 րեաց, և առուն կերպարանս ըստ օրինակի գմբեթաց.  
 նոյնունակ և հաստատութիւնդ վչեալ օդով բոլորեալ  
 պատ առեալ զերկրաւ. և օդ թանձր և թաղուն, և ա-  
 20 մենեին բնութիւն ցուրտ առաւել ի ներքոյ մտեալ ի մէջ  
 նորա շուրջ զերկրաւ պրկեալ ունի: Եւ ի ներքոյ պրկմանն  
 [481բ] արգելեալ սաստկութիւն հողմոց || վերնոց և ներքնոց՝ և ի

- 1 ♫ «անփոփի փի. «անփոթ»
- 1 ԱԲ—«պար» փի. «պատ»
- 2 ♫—«իւրեաւ» փի. «իւրե»
- 2 Ա—զզոյսոս
- 3 ԱԲ—«ինեաւ» փի. «իւրեաւ»  
(թերեւս բնագրում յեղել և  
ինքենմբ)
- 4 Բ—մեծարարած
- 5 ♫—«նոքա» չիք
- 6 ♫—«տարածեար» փի. «կա-  
տարեալ»
- 6 ♫—ձեւ յաւիտեան
- 7 ♫—«շուրջ զայց» փի. «շրջա-  
զայց»
- 8 ♫—«և անտեսանելի» չիք
- 9 ԱԲ—«միայն» չիք
- 9 ♫—«որք» փի. «որ»

- 10 ԱԴ—«ոյցացութեան»
- 12 Ա. և Բ—«զդմանէ» չիք
- 13—14 ♫—«կտացեալ» փի.  
«իստացեալ»
- 14—15 ♫—որպէս զաստիս լոյժ  
բնությամբ, Ա—զաստիս
- 15 ♫—«գովացեար» փի. «գո-  
գեաց»
- 15—16 ♫—պղպջակ
- 16 ♫—«բոլորովին» փի. «բոլո-  
րին»
- 19—20 ♫—«ամենայնիւ» փի.  
«ամենեին»
- 21 ♫—«ի ներքս» փի. «ներքոյ»
- 21 ♫—«պատեալ» փի. «պըր-  
եալ»
- 21 ♫—չիք Եւ
- 22 ♫—«ողմոյն վերոյ և ներքոյ»

մէջ առեալ փակեաց զմեծ մարմինս զայս զերկիրս: Քանզի  
 ըստ ձեռյ բուն երկնին և սա բաղկացաւ՝ զկատարեալ ձևն  
 առեալ և սա՝ շրջագայ անդադար ի նմանէ հարկաւորեալ:  
 Եւ ձեւ բոլոր շրջագային՝ բաժանի յերկուս կիսագունդու,  
 5 զի իցէ մին ի վերոյ և միւսն հայեսցի ի ներքոյ: Եւ հա-  
 յեցուածք երկուց կիսագնդիցն հանդիպութեամբ կշիռ ուղիղ  
 ի վերին և ի ներքին տրամագիծն: Քանզի յորժամ պատ  
 էառ վերին շրջագայութիւնն զմեծ զաշխարհաւու զայս՝  
 մնաց արտաքոյ եղելոց նիւթոցս և ո՛չ ինչ, և ամենայն որ  
 էջ 109 ընդ նովաւ ըստ նորին ձեռյ բաղ||կացեալ: Ո՛չ միայն երկ-  
 րորդ երկին զոր կոչեմքը հաստատութիւն, այլ և օդն թա-  
 զուն որ ընդ նովաւ, և զարդն որ յօդն. և միանդամայն  
 ամենայն մինչեւ ցներքին անօսրութիւն օդոյս: Եւ եթէ ոք  
 դժուարեսցի՝ և կամիցի օրինակ ցուցական խնդրել, տես-  
 15 ցէ՝ զի լոյժ բնութիւն ջուրց անձև է և անորակ. և եթէ  
 կամիցի ոք զնա ձեացուցանել ի տեսիլս ինչ՝ այսպէս,  
 եթէ արկանիցես է տիկ նոխալց՝ զնորին երեր  
 ձեւ: Նոյնպէս և ըստ նմանութեան բուն երկնի՝ և  
 ջուրն և օդն ձեացան: Զայսոսիկ արտաքինքն ասացին՝  
 [482ա] և սու հաւանիմ նոցա. մի՝ վասն չուրջ զալոյն || երկ-  
 նից, զի և աստուածային գիրք վկայեն. որպէս Յովլայն  
 ասաց տէր. գիտիցե՞ս զշրջանս երկնից: Եւ դարձեալ մին  
 վասն երկու երկին եղելոյ. որում նոյնպէս աստուածային  
 գիրք վկայեն՝ երկինք երկնից ասելով, որպէս յիսկըրանն  
 25 յայտնապէս ցուցանէ երկու լինել զոր կոչեն արտաքինքն  
 երկին և բուն երկին: Բայց վասն նիւթոյ հաստատութեանդ  
 միւսոյ երկնիդ ջուր և օդ լինելոյ՝ բազումք յեկեղեցւոյ

- 1 ԱԳԲ—չիք «զայս»
- 2 ♫—«երկնի» փի. «երկնին»
- 2 ♫—կատարեալ զձեն
- 6 ԱԲ—կշիռն
- 6 Ա—«ուղեղ» փի. «ուղիղ»
- 7 ♫—«արամագիծն» բառից  
հետո կրամագած և մինչեւ  
18-երրորդ տողի «նոյնպէս»  
բառը:
- 13 Բ—աննօսրութիւն
- 14 Ա.—խնդրեալ
- 19 ԱԲ—«ձեացաւ»
- 20 ԱԲ—մին
- 23 ♫—«ինելոյ» փի. «եղելոյ»
- 24 ♫—«երկինք երկնից ասե-  
լով» չիք

վկայեն նոցա, որպէս հայաստանեայցս վարդապետ Սուրբն  
 Գրիգորիոս ասէ՝ ջրեղէն հաստատութիւն երկնից: Եւ ե-  
 բանելին Բասիլիոս ի վեցօրեայ դրին իւրում ասէ, թէ  
 էջ 110 գվերին վայրս օդոյն հան||դերձ խոնաւութեամբ ջրոյն եր-  
 5 կին կոչէ, ըստ այնմ զի ասէ թռչունս երկնից: Արդ՝ զի  
 ասէ թռչունք երկնից՝ ի յերկրէ լեալք և կերակրեալք, և  
 ի սմա մեռեալք, զիա՞րդ իցեն թռչունք երկնից: Եթէ ո՛չ  
 զվերանալն ի յօդ կոչէ: Եւ դարձեալ ասէ նոյն ինքն Բա-  
 սիլիոս, եթէ յորժամ օրհնէրն Մովսէս զազդն Յովլսէփայ՝  
 10 ասէր ի ցողոյ երկնից: Եւ յորժամ գնէր անէծս Խարայելի՝  
 ասէր. Արարից ի վերա քո զերկինս պղնձի: Եւ զի՞նչ իցեն  
 միտք բանին՝ եթէ ո՛չ ամենեկին երաշտութիւն: Զի յո-  
 րինուածոյ պտղոց երկրի պատճառք օդոյն խոնաւութիւն  
 է՝ որ անուանեցաւն երկինք, որպէս ասէ ի ցողոյ երկնից,  
 [483ա] զիոնաւութիւն ջուրցն յայտ առնէ՝ զոր || ունի օդն վերին.  
 որպէս ցանի զաշխարհաւ ի պարզ ժամանակի: Զայտ առէ  
 Բասիլիոս: Բայց զնիւթոյ բուն երկնէ՝ բազումք բաղաւմ  
 ինչ ասացին. որք և յեկեղեցւող ոմանք վկայեն նոցա: Յւ  
 ոմանք այլ ինչ ասեն հանդոյն Փիլանի՝ թէ միտք են և ո՛չ  
 նիւթական ինչ: Եւ վասն երրորդ երկնի արտաքինքն ո՛չ  
 չաւանին, և ո՛չ ընագեր ինչ մեղ յայտնեաց: Բայց վասն

2 Պ—հաստատութիւնգ

2 Պ «Եւ» չիք

3 Պի—«Բարսեղ» փի. «Բասի-  
լիոս»

3 Պի «գրին իւրում» չիք

4—5 Պի—«երկինս» փի. «երկին»

5 Պի—«կոչեաց» փի. «կոչէ»

5 Պի—«թէ» փի. «զի ասէ»

5 Պի—թռչունք

6 Պ—«զի՞ ասէ» չիք

7 Պի—«թռչունք» չիք

8 Պի—«յօդն» փի. «յօդա»

8—9 Պի—«Բարսեղ» փի. «Բասի-  
լիոս»

9 Պի—օրհնէր

9 Պի—թռչունքու

11 ԱԲ իցէ

13 Պի—պաղոյ

13 ՊԻ—պատճառ

13 Պ—խոնաւութիւնն է

14 ՊԻ—անուանեցաւ

14 ՊԻ—«ասելով» փի. «ասէ»

15 ՊԻ—«օդն ի վեր» փի. «օդն  
վերին»

16 ՊԻ—ցանէ

16 Ա և Բ—«ասէ» չիք

17 Պ—«Բասիլիոս»-ից հետո կը-  
մինչկ վլիմ վերջը:

17 Պի—«երկնից» փի. «երկնէ»

18 Ա—«որ» փի. «որք և»

18 Պի—«և» չիք

18 Ա—յեկեղեցով

19 Պի—«եթէ» փի. «թէ»

21 Պ—«ընագերք ինչ ոչ» «յար-  
նեցին մեղ»

ի Պօղոսէ կոչելոյ՝ ես այսպէս հաւանիմ եթէ զերկրէս ա-  
 սէ, զի ուր աստուած է՝ նա երկին կոչի: Եւ փրկչին մերոյ  
 Քրիստոսի աստուածոյ ի վերայ երկրի ջրջելով՝ երկին ա-  
 էջ 111 սեմ կոչել ի Պօղոսէ. մանաւանդ || զի գրախան յերկրէն  
 5 և ո՛չ յերկինս իմանի:

Պ. ՅԱՂԱԳՍ ԵՐԿՐԻ

Զերկիր ոմանք յարտաքնոց բարեաց փիլիսոփայիցն ա-  
 սացին թէ՝ ձևացեալ է իբր սկուտեղ: Եւ ոմանք ասացին  
 իբր զգունդ: Եւ ոմանք որպէս քուեայ յերկեռեակ դիմի,  
 10 և ի միջոցի երկնի կառուցեալ՝ սաստկութեան հողմոյ ի  
 ներքոյ մտեալ համբարձեալ ունի զերկիր ի վեր. և ընդ-  
 անդայտութեան ցան և ցիր հողոյն երկրի խառնեալ ման-  
 րասիկ խոնաւութիւն ջուրց. և հողմոյն սաստկութեամբ ի  
 վեր վեշելով, և երկրիս թանձրահող ծանրութեամբ ի վայր-  
 15 կալով կափչի հողն յիրեարս, և ճնշի իբր ի մամուլ՝  
 [483ա] մանրասիկ խոնաւութիւն || ջուրցն ի վեր կոյս. և խանանա-  
 երկրային մարմինս ի ներքոյ ջուրցն՝ և լինի սալյաշատակ  
 հաստատրամ անփապելի և անպայթելի. նեցուկ անվթար-  
 դրազմութիւն ջուրցն յինքեան ունելով. զոր և ծով անուա-  
 նեմք: Եւ քանզի երկիրս չորեքկուսի ի միջոցի երկնի կա-  
 ռուցաւ, ո՛չ թոյլ տայ սմա երկին իւրով երազութեամբն  
 ի ներքին կիսադունդն խոնարհել: Քանզի երկիր իւրով

1 Պի—«թէ» փի. «եթէ»

1—2 Պի—«ասիցէ» փի. «ասէ»

3 Պի—«երկինք» փի. «երկին»

7 Պի—«յարտաքնոց» չիք

9 Պ—իբրե զգունատ

9 Պ—երկեռակ

9 Պ—«զիմի» չիք

10 Պ—միջոցին

10 Բ—սաստկութիւն

11 Պ—«զերկինս» փի. «զերկիր»

12 Պ—անդայտութիւն

13 Պ—հողմոյ

14 Պ—«թանձրութեամբ հողոյն»

փի, «թանձրահող ծանրու-  
թեամբ»

15 Պ «իբրե» փի. «իբր»

16 ԱԲ—խոնաւութեանն

16 Պ—«խանանայ» փի. «խանա-  
նայ»

